ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Սոսի Ալեքսանյան

ԱՐՊՀ

Բանալի բառեր. հայերի ցեղասպանություն, Թուրքիայի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, դատապարտում, մեղավոր երկիր, կոնվենցիա, մարդու իրավունքներ, նոր ցեղասպանություններ

Համաձայն «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի՝ ցեղասպանության տակ հասկացվում են այն գործողությունները, որոնք կատարվում են որևէ ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական խումբ, որպես այդպիսին լիովին կամ մասամբ ոչնչացնելու մտադրությամբ.

ա/ նման խմբի անդամների սպանությունը.

բ/ նման խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր խանգարում պատճառելը.

գ/ որևէ խմբի համար կանխամտածված այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք նախորոշված են նրան լիովին կամ մասամբ ֆիզիկապես ոչնչացնելու համար.

դ/ նման խմբի միջավայրում մանկածնությունը կանխելու նպատակով նախորոշված միջոցները.

ե/ երեխաների բռնի հանձնումը մարդկանց մի խմբից մյուսին:

Իսկ նույն կոնվենցիայի 3-րդ հոդվածը թվարկում է պատժելի համարվող գործողությունները: Դրանք են՝

ա/ ցեղասպանությունը.

բ/ ցեղասպանություն կատարելու նպատակով նյութվող դավադրությունը.

գ/ ցեղասպանություն կատարելու ուղղակի և հրապարակային հրարումը.

դ/ ցեղասպանություն կատարելու հանցափորձը.

ե/ հանցակցությունը ցեղասպանությանը:

Ինչպես երևում է կոնվենցիայի դրույթներից, Օսմանյան կայսրության կողմից 1878-1923 թթ. հայ ժողովրդի հանդեպ գործած քաղաքականությունը լրիվությամբ համապատասխանում է կոնվենցիայի 3-րդ հոդվածի դիսպոզիցիային և չի կարող որակվել այլ կերպ, քան ցեղասպանություն: /Նշված կոնվենցիայի հայրն ու <ցեղասպանություն> հասկացության հեղինակը համարվում է լեհական հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինը, ով 1944 թվականին ստեղծելով <ցեղասպանություն> եզրույթը, հիմք ընդունեց 1915

թվականի հայերի ոչնչացումը, որպես հիմնարար օրինակ/[1]: Ցեղասպանությունը պատճառում է մարդկային, նյութական, քաղաքական, տարածքային, սոցիալական, իրավաբանական ու բարոյական հսկայական կորուստներ: Հայ ժողովուրդն այդ ամենը վերապրել է, երբ սովի, տանջահարման, տեղահանումների, համաճարակների, անօթևան կյանքի ու համակենտրոնացման ճամբարների պատճառով անմեղ զոհերի թիվն անցավ երկու միլիոնից: Սակայն ամենից մտահոգիչն այն է, որ ոչ միայն զղճման, ափսոսանքի ու փոխհատուցման մասին ոչ մի խոսք չհնչեց մեղավոր երկրի իշխանություններից, այլ ընդհակառակը, հանցագործության հենց ամենասկզբից փորձ արվեց փաստերը ներկայացնել ճիշտ հակառակ ձևով: Թուրքական հրատարակություններում փորձ էր արվում միջազգային հանրության ուշադրությունը շեղել իրադարձությունների բուն ընթացքից, աղավաղել փաստերը կամ պարզունակ կերպով հերքել հայերի ոչնչացման գործում թուրքերի դերակատարությանն առնչվող ցանկացած մեղադրանք:

Փաստերի խեղաթյուրման ամենից հայտնի տարբերակները հետևյալն էին՝զոհ ժողովուրդն ինքն էր մեղավոր ճանաչվում, թուրքական քաղաքական և պատմական հրապարակախոսությունը հայերի վրա է բարդում մինչև երկու միլիոն մահմեդականների սպանությունը, թուրքականմամուլը նպաստում է երկրում հակահայկական միտումների պահպանմանը, պարբերաբար տեղեկություններ հրապարակելով հայերի բռնությանը զոհ դարձած թուրքերի զանգվածային թաղումներն Էրզրումի տարածքում և այլուր հայտնաբերելու մասին[2]: Ընդ որում, պետք է նշել, որ հայերի ցեղասպանության հարցում պետք է դատապարտել ոչ միայն դրա անմիջական կատարող Թուրքիային, այլ նաև նրա դաշնակից Գերմանիային, ով տեղյակ լինելով Թուրքիայում հայերի վերաբերյալ ծրագրին, բացարձակ անտարբերության մատնեց մի ամբողջ ժողովրդի ոչնչացման փաստը:

Գերմանիայի կառավարությունն ու արտաքին գործոց նախարարությունը ոչ միայն ոչինչ չնախաձեռնելով դիտում էին, թե ինչպես է ընթանում հայերի ամբողջական ոչնչացման թուրքական ծրագիրը (կոտորած, բռնագաղթ, մնացած բնակչության բռնի մահմեդականացում), այլև գրաքննությանն ու մամուլին ցուցումներ տալու միջոցով հոգ էին տանում, որպեսզի գերմանական ժողովուրդը ոչինչ չիմանա թուրք դաշնակիցների կողմից դավանակից հայերի բնաջնջման մասին[3]:

---

[1] Տես՝ Վիքիպեդիա Ազատ հանրագիտարանից, http://hy.wikipedia.org/wiki/%D5%8C%D5%A1%D6%86%D5%A1%D5%B5%D5%A5%D5%AC_%D4%BC%D5%A5%D5%B4%D5%AF%D5%AB%D5%B6

[2] Տես՝ Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում մարդու իրավունքների տեսանկյունից. Թեսսա Հոֆման /Արևմտյան Բեռլին/. Լ Հ Գ 1990 -4 /62/, էջ 62

[3] Տես՝ նույն տեղում, էջ 64

Գերմանական լրագրային հրատարակչության նախագահ դոկտոր Ֆարերի հարցմանը, թե ինչպես պիտի մամուլը ներկայացնի Գերմանիայի արտաքին գործոց նախարարության վերաբերմունքը հայերի ոչնչացման հանդեպ, պետական քարտուղար Ա. Ցիմերմանը որպես արտաքին գործոց նախարարության խոսնակ 1915 թ. հոկտեմբերի 4-ին գրավոր պատասխանեց. «Որքան էլ ցավալի կարող է լինել քրիստոնյայի տեսակետից այն, որ նաև անմեղ մարդիկ են տուժում թուրքական միջոցառումների ընթացքում, մեզ համար ավելի մոտ են մեր սեփական որդիներն ու եղբայրները, որոնց սրբազան ու արյունահեղ կռվին Ֆրանսիայում և Ռուսաստանում օգնում է թուրքերի ռազմական օժանդակությունը»[1]:

Երիտթուրքերի կողմից հայերի ցեղասպանության իրականացման պատճառը թուրքական ազգայնամոլությունն ու ռասիստական այն համոզմունքներն են, որ անհրաժեշտ է իրականացնել պանթուրքիզմի ծրագիրը կամ օսմանյան բազմազգ կայսրությունը դարձնել «Թուրքիա թուրքերի համար»: Երկրորդն՝ այս ոճրագործությանը նպաստեց, մանավանդ այն հանգամանքը, որ ցեղասպանության իրականացման ժամանակաշրջանը համընկավ առաջին համաշխարհային պատերազմի հետ, երբ բացակայում էր միջազգային համերաշխությունն ու խաղաղությունը: Պատերազմի մասնակից պետություններից ոչ մեկի համար 1914—1923 թվականների ժամանակահատվածում հայերը և հայերի գոյության իրավունքը ավելի կարևոր չեն եղել, քան սեփական շահերի հետապնդումը: Այս հանգամանքը և երիտթուրքերի՝ ցեղասպանություն գործելու վճռականությունը հասցրին մեկ և կես միլիոն հայերի կործանմանը և պատմական Հայաստանի տարածքի 9/10-ի կորստին[2]:

Հայերի ցեղասպանությունը դարձավ պետական հանցագործության մի նոր ձև ու այն որակվեց որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հայեցակարգն առաջին անգամ օգտագործվել է 1915 թվականի մայիսի 24-ին՝ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կողմից հրապարակված համատեղ հռչակագրում՝ թուրքական իշխանությանը նախազգուշացնելով, որ նրանք պատասխանատվություն են կրելու հայկական ջարդերի համար: Նույն կերպ, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Նյուրնբերգյան դատարանը պատերազմի նացիստական հանցագործներին մեղադրեց Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, այլ ոչ թե ցեղասպանության իրագործման համար: Հարկ է ընդգծել, որ հայկական ու հրեական ցեղասպանությունների միջև կան զուգահեռներ ինչպես իրականացման մեթոդների, այնպես էլ

[1] Տես՝ Trumpener Ulrich: Germany and the Ottoman Empire 1914 -1918. Princeton/New J e r s e y , 1968, **p. 221.**

[2] Տես՝ Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում մարդու իրավունքների տեսանկյունից. Թեսսա Հոֆման /Արևմտյան Բեռլին/. Լ Հ Գ 1990 -4 /62/, էջ 67

դրդապատճառների առումով: Եվ երիտթուրքերը և նացիստները սեփական ժողովուրդը ներկայացրել են որպես մարմին, որի վրա ազգային փոքրամասնությունը հիվանդության հարուցչի պես է ազդում: <Գոյության ոչ արժանի կյանքի> կամ <թերարժեք ռասայի[1]> վերացումը յուրաքանչյուր ցեղասպանության գաղափարախոսության լեզվագաղափարական ակունքն է[2]:

Ցավոք, հայերի ցեղասպանությունը միակը չէ համաշխարհային պատմության մեջ: Հաշվի առնելով ցեղասպանություն հանցագործության մասշտաբն ու հետևանքները, դրա վերաբերյալ ցանկացած հետազոտություն չի կարող ունենալ միայն ակադեմիական բնույթ: Իրավաբանների, պատմաբանների, քաղաքագետների, ցեղասպանագետների և ընդհանրապես այդ հարցի բոլոր հետազոտողների ու քաղաքական գործիչների գլխավոր խնդիրը պետք է լինի ցեղասպանության սկզբնապատճառների որոնումն ու վերլուծումը՝ դրա հետագա կրկնումն, որպես մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործություն, կանխելու համար: Ցեղասպանությունն իրենից ներկայացնում է մարդու համալիր իրավունքների ոտնահարում: Այստեղ խոսքը գնում է մարդու և քաղաքացու միաժամանակյա այնպիսի հիմնարար իրավունքների և ազատությունների ոտնահարման մասին, ինչպիսիք են կյանքի, սեփականության, ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու, ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու, խոսքի, իր կարծիքն ազատորեն արտահայտելու, ընտանիք կազմելու և սերունդը շարունակելու, բնակարանի անձեռնմխելիության, անձնական ազատության և անձեռնմխելիության, տպագրության, կրթության, արժանապատվության, իրենց իրավունքների դատական պաշտպանության, օրենքի առջև բոլորի հավասարության իրավունքների, մտքի, խղճի և դավանանքի ազատության և այլն: Այսինքն, ցեղասպանություն գործելով, պետությունը լրիվությամբ խախտում է մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր միջազգային հեղինակավոր պայմանագրերը, կոնվենցիաները, հռչակագրերը և այլ միջազգային փաստաթղթերը: Եթե այս իրավունքներից որևէ մեկի պաշտպանության համար պետությունը պատրաստ է իրավախախտի նկատմամբ կիրառել օրենքով սահմանված ամենախիստ պատժիչ միջոցները՝ ընդհուպ մինչև ցմահ ազատազրկում կամ մահապատիժ, ապա ինչ պատիժ պետք է նախատեսել այն ոճրագործության համար որը կոչվում է ցեղասպանություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքակիրթ երկրներից շատ շատերը վաղուց արդեն ճանաչել են երիտթուրքերի կողմից հայոց ցեղասպանության իրագործման փաստը /առաջին անգամ դա պաշտոնապես կատարվեց 1915 թվականի մայիսի 15-ին

[1] Տես՝ D a d r i a n V a h a k n N. The Role of Turkish Physicians, p. 175.

[2] Տես՝ Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում մարդու իրավունքների տեսանկյունից. Թեսսա Հոֆման /Արևմտյան Բեռլին/. Լ Հ Գ 1990 -4 /62/, էջ 67

Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի համատեղ հռչակագրով[1]/, ապա կարող ենք ասել, որ վաղուց արդեն անցել է հայերի ցեղասպանության ճանաչման ժամանակաշրջանը: Այժմ հերթը հասել է ցեղասպանության դատապարտման ու փոխհատուցման ժամանակը: Ու այն, գլխավորապես պետք է կատարվի ոչ թե միջազգային հանրության կողմից /որը, վերջին հաշվով, նյութապես ոչինչ չի տալիս/, այլ հենց ոճրագործ երկրի՝ Թուրքիայի Հանրապետության կողմից:

Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած երկրներից են՝ԱՄՆ՝ 1920 թ. մայիսի 11-ին / Սենատի 359-րդ բանաձևով/, 1984թ. սեպտեմբերի 12-ին /ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի համատեղ բանաձևով/, Ուրուգվայը՝1965թ. ապրիլի 20-ին /Սենատի և Ներկայացուցիչների պալատի բանաձևով/, այնուհետև՝ 2004թ. մարտի 26-ին /Օրենքով/, Կիպրոսը՝ 1982 թ. ապրիլի 22-ին /Ներկայացուցիչների պալատի բանաձևով/, ՌԴ՝ 1995թ. ապրիլի 14-ին /Պետական Դումայի բանաձևով/, Հունաստանը՝ 1996թ. ապրիլի 25-ին՝ /Խորհրդարանի բանաձևով/, Լիբանանը՝1997թ. ապրիլի 3-ին /Խորհրդարանի բանաձևով/, հետո՝ 2000թ. մայիսի 11-ին /Պատգամավորների պալատի բանաձևով, Բելգիան՝ 1998թ. մարտի 26-ին /Սենատի որոշմամբ/, Վատիկանը՝ 2000թ. հունվարի 10-ին /Նորին Սրբություն Հռոմի Պապ Հովհաննես Պողոս II-ի եւ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի համատեղ հայտարարությամբ/, Իտալիան՝ 2000թ. նոյեմբերի 16-ին /Պատգամավորների պալատի բանաձևով/, Ֆրանսիան՝ 2001թ. հունվարի 29-ին /Օրենքով/, Կանադան՝ 2002թ. հունիսի 13-ին /Սենատի բանաձևով/ և 2004թ. ապրիլի 21-ին /Համայնքների պալատի բանաձևով/, Արգենտինան՝ 2003թ. օգոստոսի 20-ին /Սենատի բանաձևով/, 2007թ. հունվարի 11-ին /Ազգային օրենքով/, Շվեյցարիան՝ 2003թ. դեկտեմբերի 16-ին /Ազգային Խորհրդի բանաձևով/, Սլովակիան՝ 2004թ. նոյեմբերի 30-ին /Խորհրդարանի բանաձևով/, Նիդեռլանդները՝ 2004թ. դեկտեմբերի 21-ին /Խորհրդարանի բանաձևով/, Լեհաստանը՝ 2005թ. ապրիլի 19-ին /Խորհրդարանի բանաձևով/, Գերմանիան՝ 2005թ. հունիսի 1-ին /Խորհրդարանի բանաձևով/, Վենեսուելան՝ 2005թ. հուլիսի 14-ին /Ազգային ժողովի բանաձևով/, Լիտվան՝ 2005թ. դեկտեմբերի 15-ին /Սեյմի բանաձևով/, Չիլին՝ 2007թ. հունիսի 5-ին /Սենատի բանաձևով/, Շվեդիան՝ 2010թ. մարտի 11-ին /Խորհրդարանի բանաձևով/, ինչպես նաև ԱՄՆ 43 նահանգ, այլ պետական կազմավորումներ ու միջազգային կազմակերպություններ[2]: Իսկ 1987 թվականի հունիսի 18-ին Եվրոխորհրդարանը պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

---

[1] Տես՝ Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում ժողովածու. Կազմող՝ Վ. Քոչարյան Երևան 2014, էջ 8

[2] Տես՝ նույն տեղում, էջ 19-54

Ինչ վերաբերվում է Թուրքիային <<Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին> ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիային համապատասխան դատապարտելուն և այդ կոնվենցիայի հետադարձ ուժի մասին, ապա համաձայն <Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին> ՄԱԿ-ի 1968 թվականի նոյեմբերի 26-ի կոնվենցիայի առաջին հոդվածի, վաղեմության ոչ մի ժամկետ չի կիրառվում պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ:

Նշված կոնվենցիան ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար հետապնդման և պատժի մասին հռչակագրերից, փաստաթղթերից կամ կոնվենցիաներից ոչ մեկը չի բովանդակում վաղեմության ժամկետին վերաբերող դրույթ, միջազգային իրավունքի տեսանկյունից այն դիտարկվում է որպես ծանրագույն հանցագործություն: Կոնվենցիան, պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար արդյունավետ պատիժը կարևոր գործոն է համարում նմանատիպ հանցագործությունները կանխելու, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները պաշտպանելու, վստահությունը խրախուսելու, ժողովուրդների միջև համագործակցությանն աջակցելու և միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը նպաստելու համար: Այդ պատճառով էլ, ՄԱԿ-ը հիշյալ կոնվենցիայով միջազգային իրավունքում շրջանառության մեջ է դրել պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու սկզբունքը:

Ցեղասպանությունն ամենից առաջ իրենից մարդկային կորուստներ է ենթադրում: Սակայն, այն որպես հետևանք պարունակում է նաև հսկայական նյութական կորուստներ: Ցեղասպանության նպատակներից մեկն է նաև ցեղասպանության ենթարկված ժողովրդի տարածքների ու սեփականության յուրացումը: Թուրքիայի Հանրապետությունը, որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ, ունի միջազգային իրավական պարտավորություններ: Համաձայն միջազգային իրավունքի, հանցագործությունների համար պատասխանատվությունն ընկնում է դրանք իրականացրած երկրի կամ նրա իրավահաջորդ երկրի վրա: Կարևոր է նշել այն հանգամանքը, որ ցեղասպանության իրականացման հենց սկզբից հայ ժողովուրդը չհրաժարվեց իր նյութական փոխհատուցում ստանալու իրավունքից: Այսպես, Լոզանի պայմանագրի կնքումից /1923 թվականի հուլիսի 24/ անմիջապես հետո Փարիզի վեհաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը պաշտոնական գրությամբ /1924 թվականի օգոստոսի 8/

դիմել է գլխավոր դաշնակից ուժերի արտաքին գործերի նախարարներին և վերահաստատել հայոց իրավունքներին հավատարիմ մնալը:[1]

Պահանջատիրության /նյութական փոխհատուցում ստանալու/ իրավունքը շարունակում է արդիական ու հիմնավոր մնալ մինչ օրս: Թուրքիայի Հանրապետության փոխհատուցման պարտավորությունը ներկայիս Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որպես Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդի, կազմում է առնվազն 41 միլիարդ 514 միլիոն 230 հազար 940 ամերիկյան դոլար:[2]

Այժմյան հայկական իշխանությունների կողմից շատ ողջունելի է այնպիսի փաստաթղթի ընդունումն ինչպիսինն է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը: Այս Հռչակագիրը նախադեպը չունեցող իրավական ակտ է, քանի որ դրա ընդունմանը մասնակցել են և՛ ՀՀ պետական բոլոր մարմինները, և՛ եկեղեցին, և՛ սփյուռքի խոշորագույն հոգևոր, բարեգործական, կուսակցական, մշակութային և այլ կառույցները: Հանձնաժողովում հաստատվելուց հետո այն հրապարակվելու է 7 լեզվով, այդ թվում արևմտահայերեն:

Համահայկական հռչակագրի ընդունման հիմքում դրվում են այնպիսի իրավական ակտեր, ինչպիսիք են ՀՀ անկախության հռչակագիրը և Սահմանադրությունը, ՄԱԿ-ի 1948թ դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1946 թվականի դեկտեմբերի 11-ի 96 /1/ բանաձևը, 1948 թվականի դեկտեմբերի 9-ի <Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին> ՄԱԿ-ի կոնվենցիան, 1968 թվականի նոյեմբերի 26-ի <Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին> ՄԱԿ-ի կոնվենցիան, ինչպես նաև 1966 թվականի դեկտեմբերի 16-ի <Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին> միջազգային դաշնագիրն ու մարդու իրավունքներին վերաբերող այլ միջազգային ակտեր:[3]

Համահայկական հռչակագիրը դատապարտում է 1894-1923 թվականներին Օսմանյան կայսրության և Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ծրագրված ու հայ ժողովրդի դեմ շարունակաբար իրականացված ցեղասպանական քայլերը, հայրենազրկումը, հայության ոչնչացմանն ուղղված

---

[1] Տես՝ Արա Պապյան Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները /Հոդվածների ժողովածու/ Երրորդ, լրամշակված հրատարակություն, <Հայ ժողովրդի նյութական կորուստները Հայոց ցեղասպանության ժամանակ> Երևան 2009 . էջ 75

[2] Տես՝ նույն տեղում, էջ 75

[3] Տես՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կայքէջի հետևյալ հղումը՝ http://www.genocide-museum.am/arm/29.01.2015-hrchakagir.php

զանգվածային կոտորածները, էթնիկ զտումները, հայկական ժառանգության ոչնչացումը, ինչպես նաև ցեղասպանության ժխտումը, պատասխանատվությունից խուսափելու, կատարված հանցագործություններն ու դրանց հետևանքները լռության մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը՝ որպես հանցագործության շարունակություն և նոր ցեղասպանություններ իրականացնելու քաջալերանք: Հռչակագիրը վերահաստատում է Հայաստանի և հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման և պատմական արդարության հաստատման համար: Հռչակագիրը հույս է հայտնում, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը կարևոր մեկնակետ կդառնան հայ և թուրք ժողովուրդների պատմական հաշտեցման գործընթացի համար: Մեղավոր երկրի կողմից մնում է միայն ճանաչել ու դատապարտել իր նախնիների կողմից հայ ժողովրդի հանդեպ իրագործած ցեղասպանությունը: Քանի որ հրաժարվելով պատմական իրողությունից, դրանով Թուրքիան պարարտ հող է ստեղծում ինչպես ահաբեկչության զարգացման, այնպես էլ մարդկության և խաղաղության դեմ նոր հանցագործությունների շարունակման, խրախուսման ու կատարման համար: Թուրքերի կողմից հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բացակայությունը հիմք հանդիսացավ ինչպես այլ ազգերի կողմից նոր ցեղասպանություններ իրագործելու համար /հրեաների, հույների, բուլղարների, լեհերի, գնչուների, ասորիների, աֆրիկյան մի շարք ցեղերի նկատմամբ/, այնպես էլ իր եղբայրակից ազգի՝ ազերիների կողմից արցախահայության նկատմամբ ջարդերի ու կոտորածների իրագործման համար /1988-1990 թթ. Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում և այլուր/: Ավելին, 21-րդ դարում ևս թուրքերը շարունակեցին իրենց հակամարդկային արարքները՝ իրագործելով մշակութային ցեղասպանություն Արևմտյան Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձանների նկատմամբ:

Այսպիսով, կարելի է վստահորեն ասել, որ ցեղասպանությունն իրենից ներկայացնում է մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն: Այն իր մեջ պարունակում է մարդու բոլոր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ոտնահարում: Հայերի ցեղասպանությունը ոչ թե պատմականորեն մեկուսացված երևույթ է, այլ վերաբերվում է ողջ միջազգային հանրությանը: Ցեղասպանության չդատապարտումը հիմք է հանդիսանում զանգվածային անկարգությունների, ահաբեկչության, նոր ցեղասպանությունների ու մարդկության և խաղաղության դեմ ուղղված նոր հանցագործությունների խրախուսման և առաջացման համար: Օրինակները բազմաթիվ են: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ոչ մի կազմակերպության գործունեություն, լինի դա ներպետական, պետական, տարածաշրջանային կամ միջազգային մակարդակի, արդյունավետ չի լինի, եթե

այն չդատապարտի թուրքերի կողմից հայոց ցեղսպանության իրականացումը որպես մարդու բնական իրավունքների պաշտպանության հիմք:

Թ. Հոֆմանը եզրահանգել է, որ «բոլոր դեպքերում այսօր հայկական ճակատագիրը, ըստ երևույթին, կրում է համաշխարհային հասարակայնության մոռացկոտ հիշողության կնիքը, որը դրանով նպաստել է ապագա բոլոր ցեղասպանություններին»[1]:

Ամփոփում

Ցեղասպանությունը հանդիսանում է մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործություն:

Հայերի ցեղասպանությունը ոչ թե պատմականորեն մեկուսացված երևույթ է, այլ վերաբերվում է ողջ միջազգային հանրությանը: Ցեղասպանության չդատապարտումը հիմք է հանդիսանում զանգվածային անկարգությունների, ահաբեկչության, նոր ցեղասպանությունների ու մարդկության և խաղաղության դեմ ուղղված նոր հանցագործությունների խրախուսման և առաջացման համար: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների աճող ակտիվությունը սկսել է ազդել միջազգային հանրության վրա ի օգուտ հայերի: Հայերի և այլ ժողովուրդների /հրեաների, հույների, լեհերի, գնչուների, ասորիների, աֆրիկյան որոշ ցեղերի/ նկատմամբ իրագործված ցեղասպանությունները վկայում են, որ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների առաջնահերթ խնդիրը պետք է լինի հայերի հանդեպ բռնության դադարեցումը:

[1] Հղումն ըստ Ս. Ս. Ստեփանյանի «Հայոց ցեղասպանությունը և բեռլինյան դատավարությունը» հոդվածի հղման՝ Der VOlkermord an dee Armenlern vor Gerfcht. Der ProzeS Talaat Pascha. Gesellschaftfur befrohte VOlker, GOttingen, 1980, S. 5.

Осуждение геноцида армян с точки зрения прав человека

Соси Алексанян

Резюме

Ключевые слова: геноцид, Республика Турция, Республика Армения, осуждение, Конвенция, права человека, новые геноциды.

Геноцид является тягчайшим преступлением против человечества.

Геноцид армян—это явление не исторически изолированное, а относящееся к международному содружеству вообще. Не осуждая геноцид армян, таким образом он является основой для массовых беспорядков, терроризма, новых геноцидов и новых преступлений против мира и человечества. Растущая активность правозащитных организаций начала влиять на международное общественное мнение в пользу армян. Дальнейшие проявления геноцида армян и других народов /евреев, греков, поляков, цыган, ассирийцев, некоторых африканских племен/ свидетельствуют, что безотлагательной задачей международных правозащитных организаций должно являться пресечение насилия в отношении армян.

The Conviction of the Genocide of Armenians from the Human Rights Viewpoint

Sosy Alexanyan

Summary

Keywords: *genocide, the Republic of Turkey, the Republic of Armenia, the condemnation, the Convention, human rights, new genocides.*

Genocide is the heaviest crime against humanity.

The genocide of Armenians is a phenomenon not historically isolated, but concerning international concord generally. Not condemning Armenian genocide, so it is the basis for mass riots, terrorism, new genocides and new crimes against the peace and humanity. The growing activity of human rights organizations began to influence on the international public opinion in favor of the Armenians.

Further manifestation of the Armenian Genocide and other nations /Jews, Greeks, Poles, Roma, Assyrians, some African tribes/ indicate that the immediate task of the international human rights organizations should be combating violence against Armenians.